# ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

**«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը** հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա 2023**թ. հոկտեմբերի 18-ին, ժամը՝ 12:00-ին**

Ք.ԵՐԵՎԱՆ, ԶԱՔԻՅԱՆ 10 ՀԱՍՑԵՈՒՄ, **հայտերի ընդունման վերջնաժամկետն է՝ 2023թ. հոկտեմբերի 17-ին, ժամը՝ 17:00-ին**

## ԴԱՍԱԿԱՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

## Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2023թ. սեպտեմբերի 19-ի թիվ 430-Ա հրամանով օտարման ենթակա ՀՀ պաշտպանության նախարարության հաշվեկշռում հաշվառված տրանսպորտային միջոցները

| Հ/Հ | Լոտի հերթական համարը | Գույքի (լոտի) անվանումը | Գույքի (լոտի) գտնվելու վայրը | Գույքի (լոտի) տեխնիկական վիճակը | Գույքի (լոտի) վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ | Գույքի գնահատված արժեքը /ՀՀ դրամ/ | Լոտի մեկնարկային գինը /ՀՀ դրամ/ | Նախավճարը /ՀՀ դրամ/ | Մասնակցության վճարը /ՀՀ դրամ/ | Գույքի արժեքի որոշման համար նախատեսված գումարը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 1 | Տ/մ՝Ուազ-33039 | ք. Եղվարդ | Վազքը՝339 218 կմ, շարժիչը՝ առկա է յուղի արտահոսք:Թափքը՝ ենթարկված է կոռոզիայի, նստարանները ոչ պիտանի, խցիկի տաքացուցիչը մասնատված: Այլ հանգույցներ և դետալներ՝ ամրաշրջանակը ամրաններից թուլացած, ղեկային մեխանիզմի դետալները մաշված, առջևի և հետին կամրջակները մաշված: Բացակայում է ՈՒԿՄ-ը, մեղմիչները, ապակեբարձրացման մեխանիզմը, դռների փականները, գործարկման փականը, բոլոր անջատիչները, ժայյուզը, ֆարկոպը, աջ կողային հայելին հենակով, 2 արևիկ, ձեռքի արգ. համակարգը, գեներատորը, յուղի կափարիչը, ձայնային ազդանշանը, կլեմաները, արգելակման գլխ. բաչոկը, պահեստային անվադողի կամերը, աջ բաքի կափարիչը: Փոխանցման տուփը փորձարկված չէ և առկա է յուղի արտահոսք: | Թող. տարեթիվ՝ 1999թ., Շարժիչի համարը՝ 680375,թափքի համարը՝ 0038676, հենասարքը՝ 0035794, թափքը՝բեռնատար | 500 000 | 375 000 | 18 750 | 9 825 | 18 000 |
| 2 | 2 | Տ/մ՝ ԳԱԶ-66 | ք. Եղվարդ | Վազքը՝ 301 581 կմ, շարժիչը՝ չփորձարկված, ունի յուղի արտահոսք: Թափքը՝ ամբողջովին ծռված, ունի փտած տեղեր, նստարանները ոչ պիտանի, թափքը ոչ պիտանի: Այլ հանգույցներ և դետալներ՝ հետին և առջևի կամրջակները գերմաշված են, ղեկային մեխանիզմը ոչ պիտանի: Բացակայում է ՈւԿՄ-ը, բոլոր լուսարձակները, հայելիները, խցիկի պաստառը, օդազտիչը, ինքնափչման փականները և պաշտպանիչ թիթեղները, ձեջի համակարգը, չոտկերը իր մեխանիզմով, Պ/Ա-ը: Փոխանցման տուփի դետալները մաշված և ունի յուղի արտահոսք: | Թող. տարեթիվ՝ 1980թ., շարժիչի համարը՝ 201349, հենասարքը՝ 0395115, թափքը՝ կողավոր | 550 000 | 412 500 | 20 625 | 10 763 | 18 000 |
| 3 | 3 | Տ/մ՝Ուազ-31512 | ք. Եղվարդ | Վազքը՝525 402 կմ, շարժիչը՝ աշխատում է անկանոն, աղմուկով: Թափքը՝ ամբողջովին ենթարկված կոռոզիայի, պաստառը և նստարանները պատռված: Այլ հանգույցներ և դետալներ՝ ղեկային մեխանիզմը ունի չափից ավելի ազատ ընթացք, կամրջակներում և բաժանարար տուփում առկա է յուղի արտահոսք և լսվում է կողմնակի ձայներ: Բացակայում է ՈՒԿՄ-ը, դռան 4 փականները, ընդունիչ բաշխիչը: Փոխանցման տուփի դետալները մաշված և ունի յուղի արտահոսք: | Թող. տարեթիվ՝ 2001թ., շարժիչի համարը՝ 10010360, թափքի համարը՝ 10004650, հենասարքը՝ 10005007, թափքը՝ մարդատար | 750 000 | 562 500 | 28 125 | 13 888 | 18 000 |
| 4 | 4 | Տ/մ՝ Ուազ-396290 | ք. Եղվարդ | Վազքը՝ 346 750 կմ, շարժիչը՝ չփորձարկված: Թափքը՝ առկա է փտած, ժանգոտված տեղեր: Այլ հանգույցներ և դետալներ՝ ղեկային մեխանիզմը անսարք, բաժանարար տուփում և կամրջակներում առկա են յուղի արտահոսք: Բացակայում է ՈՒԿՄ-ը, 3 մեղմիչներ: Փոխանցման տուփը չի պահում 1-ին և հետընթացի փոխանցումները: | Թող. տարեթիվ՝ 2000թ., շարժիչի համարը՝ 0905855, թափքի համարը՝ 0033842, հենասարքը՝ 0033179, թափքը՝ սանիտարական | 600 000 | 450 000 | 22 500 | 11 700 | 18 000 |
| 5 | 5 | Տ/մ՝Ուազ-31512 | ք. Եղվարդ | Վազքը՝ 340 389 կմ, շարժիչը՝ կախովի սարքավորումները ոչ պիտանի: Թափքը՝ ամբողջովին դեֆորմացված, փտած, տենտերը մաշված, դռների ամրանները եռակցված: Այլ հանգույցներ և դետալներ՝ բաժանարար տուփը, ղեկային մեխանիզմը, կարդանային լիսեռները՝ ոչ պիտանի, առջևի կամրջակի դետալները մաշված, էլ սարքավորումները մասնատված, վազքաչափը անսարք, ռադիատորը եռակցված, մեղմիչները ոչ պիտանի, հայելիները և ապակեմաքրիչները ոչ պիտանի: Բացակայում է օդազտիչը, ժայյուզը, 6 նստատեղերը, բեռնախցիկի նստարանները, ձեռքի արգելակման մեխանիզմը: | Թող. տարեթիվ՝ 2004թ., շարժիչի համարը՝ 40902080, թափքի համարը՝ 0584813, հենասարքը՝ 503729, թափքը՝ մարդատար | 800 000 | 600 000 | 30 000 | 14 450 | 18 000 |
| 6 | 6 | Տ/մ՝Ուազ-31512 | ք. Եղվարդ | Վազքը՝ 330 849 կմ, շարժիչը՝ առկա է յուղի արտահոսք: Թափքը՝ կոմպլեկտացված, պաստառը պատռված: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման տուփը և ղեկային մեխանիզմը ոչ պիտանի, բաժանարար տուփը և կամրջակները ոչ պիտանի, առկա է յուղի արտահոսք, ռադիատորը ոչ պիտանի: Բացակայում է օդազտիչը, ՈՒԿՄ-ը: | Թող. տարեթիվ՝ 2004թ., շարժիչի համարը՝ 40804129, թափքի համարը՝ 040584871, հենասարքը՝ 503789, թափքը՝ մարդատար | 800 000 | 600 000 | 30 000 | 14 450 | 18 000 |
| 7 | 7 | Տ/մ՝Ուազ-31512 | ք. Եղվարդ | Վազքը՝361 667 կմ, շարժիչը՝ ճնշումը նորմայից ցածր, առկա է յուղի արտահոսք: Թափքը՝ ենթարկված կոռոզիայի, ունեն փտած, դեֆորմացված տեղեր, տենտը և նստարանները մաշված, շիթը ոչ պիտանի: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման տուփում, բաժանարար տուփում և ետին կամրջակում լսվում են կողմնակի ձայներ, ղեկային մեխանիզմը մաշված, առջևի կամրջակը չի միանում, առկա է յուղի արտահոսք, ռեսորները կոտրված, կարբյուրատորը այլ մակնիշի, մեղմիչները, լուսարձակները ոչ պիտանի, արգելակման համակարգը անսարք, ռադիատորը այլ մակնիշի: | Թող. տարեթիվ՝ 2000թ., շարժիչի համարը՝ 0707889, թափքի համարը՝ 0022561, հենասարքը՝ 0022537, թափքը՝ մարդատար | 700 000 | 525 000 | 26 250 | 13 325 | 18 000 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | 8 | Տ/մ՝ Ուազ 315120 | ք. Եղվարդ | Վազքը՝ 404 360 կմ, շարժիչը՝ կախովի սարքավորումները մաշված, առկա է յուղի արտահոսք, մեկնարկիչը անսարք: Թափքը՝ ենթարկված կոռոզիայի, դիմապակին ճաքած, թափքը ծռված, փտած, աղաղները ծռված, նստարանները ոչ պիտանի: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման տուփի փոխանցումները դուրս են գցում, առկա է յուղի արտահոսք, բաժանարար տուփում առկա է յուղի արտահոսք, ղեկային մեխանիզմը ունի չափից ավել ազատ ընթացք, կամրջակների դետալները մաշված, կան կողմնակի ձայներ, ռեսորները ամրաններից թուլացած, ռադիատորը ոչ պիտանի: Բացակայում է ՈՒԿՄ-ը, ժայլուզը, լուսարձակները, օդազտիչի ընդարձ. բաք, մոմիկների լարերը, կլեմաները, մասսայի կնոպկան, չոտկերը իր մեխանիզմով, որոնող լապտերը, պահեստային անվադողը: | Թող. տարեթիվ՝ 2000թ., շարժիչի համարը՝ 0907612, թափքի համարը՝ 0031337, հենասարքը՝ 0031643, թափքը՝ մարդատար | 700 000 | 525 000 | 26 250 | 13 325 | 18 000 |
| 9 | 9 | Տ/մ՝Ուազ-31512 | ք. Եղվարդ | Վազքը՝ 323 021 կմ, շարժիչը՝ ունի յուղի արտահոսք, կախովի սարքերը ոչ պիտանի: Թափքը՝ նստարանները ոչ պիտանի, շիթը դեֆորմացված, դռների բացման մեխանիզմները ոչ պիտանի: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման տուփում, բաժանարար տուփում և ղեկային մեխանիզմում առկա են յուղի արտահոսք, հետևի կարդանը քանդված, կիսասռնիները քանդված, վառելիքատար խողովակները մասնակի մասնատված, ռադիատորը ծռված, լուսարձակները ոչ պիտանի, թափքը ամրաններից թուլացած, ունի ծռված, փտած տեղեր: Բացակայում է չոտկերը, ՈՒԿՄ-ը, փեչի համակարգը, գործարկման փականը, էլ. ռելեները, էլ. անջատիչը, արևիկները, դռան բռնակները, լուսարձակները: | Թող. տարեթիվ՝ 2001թ., շարժիչի համարը՝ 10302552, թափքի համարը՝ 10007503, հենասարքը՝ 10008032, թափքը՝ մարդատար | 750 000 | 562 500 | 28 125 | 13 888 | 18 000 |
| 10 | 10 | Տ/մ՝ Ուազ 469 | ք. Եղվարդ | Շարժիչը՝ ունի յուղի արտահոսք: Թափքը՝ կոռոզիայի ենթարկված, ունեն փտած, ծակած տեղեր, նստարաններ, տենտը ոչ պիտանի: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման տուփից լսվում են կողմնակի ձայներ, բաժանարար տուփը անջատումներ չի կատարում, ղեկային մեխանիզմը մաշված, կարդանային լիսեռները մաշված, կամրջակներում առկա է յողի արտահոսք, շիթը եռակցված: Բացակայում է ժայլուզը, ֆարտուկը, թևիկները, աղեղները, ՈՒԿՄ-ը ոչ պիտանի: | Թող. տարեթիվ՝ 1988թ., շարժիչի համարը՝ 80203833, թափքի համարը՝ 6455, հենասարքը՝ 147153, թափքը՝ մարդատար | 450 000 | 337 500 | 16 875 | 8 888 | 18 000 |
| 11 | 11 | Տ/մ՝Զիլ-131 | ք. Եղվարդ | Վազքը՝ 12 561 կմ, շարժիչը՝ ունի յուղի արտահոսք, կախովի սարքավորումները ոչ պիտանի: Թափքը՝ փտած, ծռված, կոտրված: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման և բաժանանար տուփերը ունեն յուղի արտահոսք, ղեկային մեխանիզմը ունի չափից ավել ազատ ընթացք, կամրջակները ունեն չափից ավել ազատ ընթացք, կարդանային լիսեռները գերմաշված, ռեսորները ամրաններից թուլացած, լուսարձակները ոչ պիտանի, հովացման ռադիատորները ոչ պիտանի: Բացակայում է ՈՒԿՄ-ը, ինքնափչման փականները և պաշտպանիչ թիթեղները, ռետինե խողովակները, դռների բռնակները, էլ. անջատիչ, էլ. ռելե, չոտկ, ֆարկոպ: | Թող. տարեթիվ՝ 1974թ., շարժիչի համարը՝ 547239, հենասարքը՝ 163088, թափքը՝ կողավոր | 550 000 | 412 500 | 20 625 | 10 763 | 18 000 |
| 12 | 12 | Տ/մ՝ Զիլ-131-ՎՖՍ-10 | ք. Եղվարդ | Շարժիչը՝ բացակայում են կարբյուրատորը, բենզամղիչը, դինամոն: Թափքը՝ ծռված, ապակեբարձրացման մեխանիզմները ոչ պիտանի, շիթոկը քանդված: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման և բաժանարար տուփերը, կամրջակները ունեն յուղի արտահոսք, ղեկային մեխանիզմը ենթակա է նորոգման, կարդանային լիսեռները գերմաշված, ռեսորները ամրաններից թուլացած, վառելիքատար խողովակները օդի համակարգը մասնակի մասնատված: Բացակայում է ապակեմաքրիչները, գործարկման փականը, բարձր լարման հոսանքի մալուխները, ջրի հովացման ռադիատորը, ՏԿ-200 լիցքավորման ռելեն, ինքնաձգման փականները, պաշտպանիչ թիթեղները, ՈՒԿՄ-ն, Պ/Ա-ն: | Թող. տարեթիվ՝ 1990թ., շարժիչի համարը՝ 542747, հենասարքը՝ 0882293 | 550 000 | 412 500 | 20 625 | 10 763 | 18 000 |
| 13 | 13 | Տ/մ՝ Զիլ-131 | ք. Եղվարդ | Վազքը՝ 45 267 կմ, շարժիչը՝ չփորձարկված, երկկողմանի կարկատած, բոլոր կախովի սարքերը ոչ պիտանի: Թափքը՝ ամբողջովին ծռված, շիթը դեֆորմացված, չոտկերը ոչ պիտանի, շիտոկը քանդված: Այլ հանգույցներ և դետալներ՝ բաժանարար տուփից լսվում են կոշտ ձայներ, առկա է յուղի արտահոսք, ղեկային մեխանիզմը ունի չափից ավել ազատ խաղ, առջևի կամրջակի ռեդուկտորի ատամնանիվները մաշված, աջ և ձախ թեքման բռունցքները մաշված, կամրջակները չփորձարկված, առկա է յուղի արտահոսք, կարդանային լիսեռները գերմաշված, լուսարձակները ոչ պիտանի, վառելիքատար խողովակները մասնակի մասնատված: Բացակայում է ՈՒԿՄ-ը, ինքնափչման փականնեերը, պաշտպանիչ թիթեղները, ռետինե խողովակները, 2 հատ վառ. բաք, 2 հայելիներ, էլ. անջատիչ 6 հատ, էլ. ռելե 3 հատ, տնտը: Փոխանցման տուփի 2-րդ, 3-րդ և հետընթացի փոխանցումները դուրս է գցում, առկա է յուղի արտահոսք: | Թող. տարեթիվ՝1980 թ., շարժիչի համարը՝ 705227, թափքի համարը՝ 81017, հենասարքը՝ 566241, թափքը՝ կողավոր | 550 000 | 412 500 | 20 625 | 10 763 | 18 000 |
| 14 | 14 | Տ/մ՝ Զիլ-131 ԱՑ-5 ՏԶՄ | ք. Եղվարդ | Վազքը՝ 7 626 կմ, շարժիչը՝ չփորձարկված, կախովի սարքերը անսարք, առկա է յուղի արտահոսք: Թափքը՝ ծռված, փտած, կոտրված, շիթը ծռված: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման տուփը, բաժանարար տուփը, ղեկային մեխանիզմը, կամրջակները չփորձարկված են, ունեն յուղի արտահոսք: Բացակայում է ՈՒԿՄ-ը, պաստառը, ինքնափչման փականները և պաշտպանիչ թիթեղները, ռետինե խողովակները: | Թող. տարեթիվ՝1979թ., թափքի համարը՝ 050796, հենասարքը՝ 493477 | 500 000 | 375 000 | 18 750 | 9 825 | 18 000 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 15 | 15 | Տ/մ.՝ Զիլ-131 ՈՒԿՍ-400 | ք. Եղվարդ | Վազքը՝ 4 820 կմ, շարժիչը՝ սարքին, առկա է յուղի արտահոսք: Թափքը՝ բավարար: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման տուփը, բաժանարար տուփը, ղեկային մեխանիզմը, կամրջակները չփորձարկված են: Բացակայում է ՈՒԿՄ-ը, վառելիքի բաքը, հայելին, լուսարձակը: | Թող. տարեթիվ՝1984թ., շարժիչի համարը՝ 091399, հենասարքը՝ 576660, թափքը՝ կողավոր | 950 000 | 712 500 | 35 625 | 16 138 | 18 000 |
| 16 | 16 | Տ/մ.՝Զիլ-131 ՄՏՕ-ԱՏ-Մ1 | ք. Եղվարդ | Վազքը՝ 115 832 կմ, շարժիչը՝ առկա է յուղի արտահոսք: Թափքը՝ ենթարկված կոռոզիայի, նստարանները մաշված: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման տուփը 3-րդ փոխանցումը դուրս է գցում, առկա է յուղի արտահոսք, բաժանարար տուփը դժվարությամբ է միանում, ղեկային մեխանիզմը դժվարությամբ է աշխատում, կամրջակներն ունեն յուղի արտահոսք, լսվում են կողմնակի ձայներ: Բացակայում է ՈՒԿՄ-ը: | Թող. տարեթիվ՝ 1988թ., շարժիչի համարը՝ 639203, հենասարքը՝ 790782, թափքը՝ կողավոր | 850 000 | 637 500 | 31 875 | 15 013 | 18 000 |
| 17 | 17 | Տ/մ.՝Զիլ-131 | ք. Եղվարդ | Վազքը՝ 48 263 կմ, շարժիչը՝ շարժիչի կաղապարը ունի ճաք. կախովի սարքերը ոոչ պիտանի: Թափքը՝ կոռոիայի ենթարկված, աջ անվաթևը ծռված, շիթը դեֆորմացված, նստարանները պատռված: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման և բաժանարար տուփերը մաշված են և ունեն յուղի արտահոսք, ղեկային մեխանիզմը չփորձարկված, կամրջակները չփորձարկված, ունեն յողի արտահոսք, կարդանային իսեռները գերմաշված, ռեսորները ամրաններից թուլացած, ռադիատորը ռակցված: Բացակայում է ՈՒԿՄ-ը, գեներատորը, կողային հայելինները, արևիկները, չոտկը, տենտը, ռելեները, էլ. անջատիչները, գործարկման փականի, պահեստային անվադողը: | Թող. տարեթիվ՝ 1979թ., շարժիչի համարը՝ 009734, հենասարքը՝ 368384, թափքը՝ կողավոր | 500 000 | 375 000 | 18 750 | 9 825 | 18 000 |
| 18 | 18 | Տ/մ.՝ Զիլ-131 | ք. Եղվարդ | Վազքը՝ 45 262 կմ, շարժիչը՝ իրանը և գլանների գլխիկերը փտած: Թափքը՝ ունի փտած տեղեր, ենթարկված կոռոզիայի: Այլ հանգույցներ և դետալներ՝ ամրաշրջանակը թուլացած, փոխանցման տուփի դետալներն ունեն բնական մաշվածություն, բաժանարար տուփի դետալները ունեն չափից ավելի ազատ ընթացք, ղեկային մեխանիզմը ունի չափից ավելի ազատ ընթացք, կամրջակներից լսվում են կողմնակի ձայներ, առկա է յուղի արտահոսք, կարդանային լիսեռները գերմաշված, արգելակման համակարգի ռետինե խողովակները և սալնիկները ոչ պիտանի: Բացակայում է ՈՈՒԿՄ-ը, էլ. լարերը, էլ. ռելեները, շարժիչի բոլոր կախովիները, լուսարձակները, հայելիները, հովացման ռադիատորը, ինքնափչման փականները և պաշտպանիչ թիթեղները, խցիկի պաստառը, էլ անջատիչը, ֆարկոպը: | Թող. տարեթիվ՝ 1972թ., շարժիչի համարը՝ 238483, հենասարքը՝ 075432, թափքը՝ կողավոր | 550 000 | 412 500 | 20 625 | 10 763 | 18 000 |
| 19 | 19 | Տ/մ.՝ Զիլ-131 ՁՎ-9 | ք. Եղվարդ | Վազքը՝ 10 289 կմ, շարժիչը՝ բլոկը ճաքած, առկա է յուղի արտահոսք, բոլոր կախովի սարքերը ոչ պիտանի: Թափքը՝ ենթարկված է կոռոզիայի, շիթը ծռված, խցիկը ծռված, փտած, շիտոկը քանդված: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման և բաշխիչ տուփերում առկա է յուղի արտահոսք, ղեկային մեխանիզմը անսարք, կամրջակները ունեն յուղի արտահոսք, կարդանային լիսեռները գերմաշված, լուսարձակները ոչ պիտանի, վառելիքատար խողովակները մասնակի մասնատված, խցիկի նստարանները ոչ պիտանի: Բացակայում է ՈՒԿՄ-ը, ինքնափչման փականները, պաշտպանիչ թիթեղները, դռան բռնակը, լուսարձակը: | Թող. տարեթիվ՝ 1986թ., Հենասարքը՝ 253720, թափքը՝ կողավոր | 650 000 | 487 500 | 24 375 | 12 638 | 18 000 |
| 20 | 20 | Տ/մ.՝ Զիլ-131 B (ՊՌ-11) | ք. Եղվարդ | Վազքը՝ 20 215 կմ, շարժիչը՝ բոլոր կախովի սարքերը ենթակա են նորոգման, առկա է յուղի արտիոսք, կաղապարը ճաքած: Թափքը՝ ծռված, ունի փտած տեղեր, շիթը ծռված, պաստառը և նստատեղերը պատռված: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման և բաժանարար տուփերը ունեն յուղի արտահոսք, ղեկային մեխանիզմն ունի չափից ավել ազատ ընթացք, կամրջակներում առկա եեն յուղի արտահոսք, կարդանային լիսեռները գեերմաշված, շտանգաները ոչ պիտանի, ռեսորները ամրաններից թուլացած, վառելիքատար խողովակները մասնատված, բաքերը ծակված, մեկնարկիչը քանդված, ռադիատորը ծակված եռակցված: Բացակայում է ՈՒԿՄ-ը, փեջի համակարգը, չոտկերը իր մեխանիզմով, հայելիները, ժայլուզը, ինքնափչման փականները, պաշտպանիչ թիթեղները, օդազտիչը, առջևի կարդանը, օդի կենտրոնական փականը, 5 հատ անջատիչը, գործարկման փականը: | Թող. տարեթիվ՝ 1982թ., Շարժիչի համարը՝ 0456, հենասարքը՝ 342602, թափքը՝ քարշակ | 650 000 | 487 500 | 24 375 | 12 638 | 18 000 |
| 21 | 21 | Տ/մ.՝Զիլ-131 | ք. Եղվարդ | Վազքը՝ 36 144 կմ, շարժիչը՝ առկա է յուղի արտահոսք, կախովի սարքերը ոչ պիտանի: Թափքը՝ ենթարկված է կոռոզիայի, պաստառը մաշված: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման տուփը փոխանցումները չի պահում, առկա է յուղի արտահոսք, բաժանարար տուփում և ղեկային մեխանիզմում առկա է յուղի արտահոսք, կարդանային լիսեռները գերմաշված, ռեսորները ամրաններից թուլացած, ամրաշրջանակը ամրաններից թուլացած, էլ. սարքերն ունեն կարճ միացում, մեղմիչները ոչ պիտանի: Բացակայում է ՈՒԿՄ-ը, թափքը, ֆարկոպը: | Թող. տարեթիվ՝ 2004թ., շարժիչի համարը՝ Դ-245 12Ս 115030, թափքի համարը՝ Ա-351, հենասարքը՝ 837226, թափքը՝ կողավոր | 900 000 | 675 000 | 33 750 | 15 575 | 18 000 |
| 22 | 22 | Տ/մ.՝ Զիլ-131 | ք. Եղվարդ | Վազքը՝ 45 512 կմ, շարժիչը՝ կաղապարը երկկողմանի կարկատած, կախովի սարքերը ենթակա են նորոգման: Թափքը՝ ենթարկված կոռոզիայի, ծռված, ունի փտած տեղեր: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման և բաշխիչ տուփերը չփորձարկված, ղեկային մեխանիզմն ունի նորոգման կարիք, կամրջակները ունեն յուղի արտահոսք: Բացակայում է ՈՒԿՄ-ը, հետին ստոպերը, էլ. անջատիչները: | Թող. տարեթիվ՝ 1986թ., շարժիչի համարը՝ 677200, հենասարքը՝ 699815, թափքը՝կողավոր | 650 000 | 487 500 | 24 375 | 12 638 | 18 000 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 23 | 23 | Տ/մ՝ Զիլ-131 | ք. Եղվարդ | Վազքը՝ 27 675 կմ, շարժիչը՝ կաղապարը ճաքած, կախովի սարքավորումները ոչ պիտանի, առկա է յուղի արտահիսք: Թափքը՝ ծռված, ունի փտած տեղեր, նստարանները և պաստառները ոչ պիտանի, շիտոկը քանդված, չստկերը ոչ պիտանի: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման և բաժանարար տուփերում, ղեկային մեխնիզմում առկա են յուղի արտահոսք, կամրջակներն ունեն յուղի արտահոսք, կարդանային լիսռները գերմաշված, մեխանիզմները և հանգույցները տեխնիկապես մաշվել են, աշխատում են անկանոն, պիտանի չեն հետագա շահագործման: Բացակայում է ՈՒԿՄ-ը, ինքնափչման փականները, ռետինե խողովակները, պաշտպանիչ թիթեղները, ապակեբարձրացման մեխանիզմը, 1 հատ հայելին: | Թող. տարեթիվ՝ 1987թ., շարժիչի համարը՝ 601877, հենասարքը՝ 711637, թափքը՝ դատարկ կունգ | 650 000 | 487 500 | 24 375 | 12 638 | 18 000 |
| 24 | 24 | Տ/մ՝Զիլ-131 | ք. Եղվարդ | Վազքը՝ 233 617 կմ, շարժիչը՝ չփորձարկված, կախովի սարքերը ոչ պիտանի առկա է յուղի արտահոսք, կաղապարը 3 տեղից ճաքած: Թափքը՝ ծռված, ունի փտած տեղեր, շիթը ծռված, չստկերը ոչ պիտանի, պաստառը և նստարանները ոչ պիտանի: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման և բաժանարար տուփերը չփորձարկված, առկա եեն յուղի արտահոսք, ղեկը կոտրված, ղեկային մեխանիզմն ունի արտահոսք, կամրջակները չփորձարկված, ունեն յուղի արտահոսք, կարդանային լիսեռները գերմաշված, լուսարձակները ոչ պիտանի, ռադիատորը եռակցված: Բացակայում է ՈՒԿՄ-ը, ինքնափչման փականնեերը և պաշտպանիչ թիթեղները, դռան բռնակը, փեջի համակարգը: | Թող. տարեթիվ՝ 1982թ., շարժիչի համարը՝ 616245, թափքի համարը՝ 01007, հենասարքը՝ 482616, թափքը՝ կունգ | 550 000 | 412 500 | 20 625 | 10 763 | 18 000 |
| 25 | 25 | Տ/մ՝ Զիլ-131 Ռ-137 | ք. Եղվարդ | Վազքը՝ 66 203 կմ, շարժիչը՝ իրանը և գլանների գլխիկները փտած, առկա է յուղի արտահոսք: Թափքը՝ առկա են փտած տեղեր, ամրաններից թուլացած: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման տուփի փոխանցումները հաճախակի անջատվում են, դետալները մաշված, բաժանարար տուփի դետալնեերը մաշված, ղեկային մեխանիզմն ունի չափից ավելի ազատ ընթացք, կամրջակներից լսվում են կողմնակի ձայներ, ունեն բնական մաշվածություն, կարդանային լիսեռները գերմաշված, արգելակման համակարգի ռետինե խողովակները և սալնիկները չորացած, ճաքճքված: Բացակայում է ՈՒԿՄ-ը: | Թող. տարեթիվ՝ 1982թ.,շարժիչի համարը՝ 115048, թափքի համարը՝ 09525, հենասարքը՝ 319482 | 650 000 | 487 500 | 24 375 | 12 638 | 18 000 |
| 26 | 26 | Տ/մ՝ Զիլ-131 | ք. Եղվարդ | Վազքը՝ 400 292 կմ, շարժիչը՝ բլոկը կարկատած, կախովիները ոչ պիտանի: Թափքը՝ ծռված, փտած, նստարանները ոչ պիտանի, շիթը դեֆորմացված: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման տուփի դետալները մաշված, առկա է յուղի արտաոսք, բաժանարար տուփի առամնանիվները մաշված, ղեկային մեխանիզմն ունի չափից ավելի ազատ ընթացք, կամրջակների առանցքակալների նստեցման բնիկները մաշված, կարդանային լիսեռները մաշված, ռեսորները ամրաններից թուլացած, լուսարձակները ոչ պիտանի, ռադիատորը ծռված, եռակցված: Բացակայում է ՈՒԿՄ-ը: | Թող. տարեթիվ՝ 1976թ.,շարժիչի համարը՝ 758394, հենասարքը՝ 717445, թափքը՝ կողավոր | 550 000 | 412 500 | 20 625 | 10 763 | 18 000 |
| 27 | 27 | Տ/մ՝Զիլ-131 | ք. Եղվարդ | Վազքը՝ 57 084 կմ, շարժիչը՝ կախովի սարքերը անսարք, առկա է յուղի արտահոսք: Թափքը՝ առկա են ծռված և փտած տղեր, պաստառը և նստարանները ոչ պիտանի, հայելիները, չստկերը ոչ պիտանի: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման և բաժանարար տուփերում առկա են յուղի արտահոսք, ղեկային մեխանիզմն ունի նորոգման կարիք, կամրջակներում առկա են յուղի արտահոսք, կարդանային լիսեռները գերմաշված, վառելիքատար խողովակները մասնատված, հովացման ռադիատորը ծռված, եռակցված: Բացակայում է ՈՒԿՄ-ը, ինքնափչման փականները և պաշտպանիչ թիթեղները, ռետինե խողովակները, էլ. ռլե, էլ. անջատիչը, լուսարձակը: | Թող. տարեթիվ՝1973թ.,շարժիչի համարը՝ 505168, հենասարքը՝ 110332, թափքը՝ ցիստերն | 550 000 | 412 500 | 20 625 | 10 763 | 18 000 |
| 28 | 28 | Տ/մ՝Զիլ-131 | ք. Եղվարդ | Վազքը՝ 135 910 կմ, շարժիչը՝ երկկողմանի կարկատած, բոլոր կախովի սարքերը ոչ պիտանի, առկա է յուղի արտահոսք: Թափքը՝ ծռված, փտած նստարանները ոչ պիտանի, ապակիները քանդված, չստկերը ոչ պիտանի: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման տուփի 1-ին, 3-րդ հետընթացի փոխանցումները դուրս է գցում, բաժանարար տուփից լսվում են կողմնակի ձայներ, առկա է յուղի արտահոսք, ղեկային մեխանիզմը ոչ պիտանի, ղեկն ունի չափից ավելի ազատ ընթացք, ռեդուկտորի ատամնանիվները մաշված, կարդանային լիսեռները գերմաշված, կամրջակներում առկա է յուղի արտահոսք, ռեսորները ամրաններից թուլացած, օդի համակարգը, վառելիքատար խողովակները մասնակի մասնատված, դռների բացման մեխանիզմը, ապակեբարձրացման ոչ պիտանի: Բացակայում է ՈՒԿՄ-ը, ինքնափչման փականները, պաշտպանիչ թիթեղները, էլ ռելեներ, էլ. անջատիչը, հայելին, խցիկի պաստառը: | Թող. տարեթիվ՝ 1986թ.,շարժիչի համարը՝ 690584, հենասարքը՝ 792609, թափքը՝ կողավոր | 650 000 | 487 500 | 24 375 | 12 638 | 18 000 |
| 29 | 29 | Տ/մ՝ Զիլ-131 | ք. Եղվարդ | Վազքը՝ 32 152 կմ, շարժիչն ունի բնական մաշվածություն, աշխատում է անկանոն, առկա է յուղի արտահոսք: Թափքը՝ ոչ բարվոք վիճակ, ունի վնասվածք, թափքը հնամաշ, ենթակա չէ շահագործման: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման տուփի փոխանցումները դժվարությամբ են միանում, առկա է յուղի արտահոսք, բաժանարար տուփը ունի յուղի արտահոսք, ղեկային մեխանիզմը պտտվում է դժվարությամբ, կամրջակներում առկա է յուղի արտահոսք, հովացման համակարգը ենթակա չէ հետագա շահագործման: Բացակայում է ՈՒԿՄ-ը: | Թող. տարեթիվ՝ 1983թ., շարժիչի համարը՝ 975535, հենասարքը՝ 847161 | 550 000 | 412 500 | 20 625 | 10 763 | 18 000 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 30 | 30 | Տ/մ.՝Զիլ-131 | ք. Եղվարդ | Վազքը՝ 102 327 կմ, շարժիչը՝ չփորձարկված, առկա է յուղի արտահոսք, կախովի սարքերը ոչ պիտանի, շարժիչը անսարք: Թափքը բացակայում է, խցիկը անբավարար, նստարանները կոտրված, ապակեբարձրացման մեխանիզմը ոչ պիտանի, շիթը ծռված: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման տուփը, բաժանարար տուփը, ղեկային մեխանիզմը, կամրջակները չփորձարկված, ղեկը կոտրված, կամրջակներից առկա է յուղի արտահոսք, կարդանային լիսեռները գերմաշված, ռեսորները ամրաններից թուլացած, լուսարձակները ոչ պիտանի, հովացման համակարգը անսարք, խցիկի ապակիները քանդված, չռտկերը ոչ պիտանի: Բացակայում է ՈՒԿՄ-ը, ինքնափչման փականները և պաշտպանիչ թիթեղները, ռետինե խողովակները, էլ. ռելեները, էլ. անջատիչ, գործարկման փականը, օդի գլխավոր փականը, դռան բռնակը, պադտրուբկա 2 հատ, լուսարձակը: Ամրաշրջանակը ծռված: | Թող. տարեթիվ՝ 1981թ., շարժիչի համարը՝ 228501, հենասարքը՝ 737605, թափքը՝ կողավոր | 550 000 | 412 500 | 20 625 | 10 763 | 18 000 |
| 31 | 31 | Տ/մ.՝ Զիլ-131 Դ(Ռ-137) | ք. Եղվարդ | Վազքը՝ 26 186 կմ, շարժիչը՝ իրանը և գլանների գլխիկները փտած, առկա է յուղի արտահոսք: Թափքը՝ առկա է փտած տեղեր: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման տուփի դետալները մաշված, բաժանարար տուփի դետալները մաշված և ունի չափից ավել ազատ ընթացք, ղեկային մեխանիզմն ունի չափից ավել ազատ ընթացք, կամրջակներում առկա է յուղի արտահոսք: Բացակայում է ՈՒԿՄ-ը: | Թող. տարեթիվ՝ 1987թ., շարժիչի համարը՝ 115693, հենասարքը՝ 733255 | 650 000 | 487 500 | 24 375 | 12 638 | 18 000 |
| 32 | 32 | Տ/մ.՝ Զիլ-131 | ք. Եղվարդ | Վազքը՝ 190 821 կմ, շարժիչը՝ չփորձարկված, առկա է յուղի արտահոսք, կախովի սարքերը ոչ պիտանի: Թափքը՝ ենթարկված կոռոզիայի, ունի փտած տեղեր, շիթը դեֆորմացված, թևիկները ծռված: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցումների և բաժանարար տուփերը չփորձարկված, առկա է յուղի արտահոսք, ղեկային մեխանիզմը չփորձարկված, կամրջակները չփորձարկված, կարդանային լիսեռները գերմաշված, խցիկի պաստառը և նստարանները պատռված, ռադիատորը եռակցված: Բացակայում է ՈՒԿՄ-ը, կողային հայելիները, ալ. անջատիչները, գործարկման փականը, էլ. ռելեները, նստարանները, քամհար ապակիները, պ/անվադողը: | Թող. տարեթիվ՝ 1980թ.,շարժիչի համարը՝ 502981, հենասարքը՝ 281951, թափքը՝ կողավոր | 550 000 | 412 500 | 20 625 | 10 763 | 18 000 |
| 33 | 33 | Տ/մ.՝ Զիլ-131 | ք. Եղվարդ | Վազքը՝ 333 584 կմ, շարժիչը՝ քանդված, ոչ պիտանի: Թափքը՝ խցիկը դեֆորմացված, ունի փտած տեղեր, պաստառը և նստարանները ոչ պիտանի: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցումները և բաժանարար տուփերը, ղեկային մեխանիզմը չփորձարկված, առկա է յուղի արտահոսք, կամրջակները չփորձարկված, կարդանային լիսեռները ոչ պիտանի, լուսարձակները ոչ պիտանի, շիթը, աբլիցովկան եռակցված, վառ. բաքերը ժանգոտած, ռադիատորը եռակցված: Բացակայում է ՈՒԿՄ-ը, շարժիչի գլխիկները, կախովի սարքավորումները, դռների բռնակները, կողային հայելիները, պ/անվադողը, էլ. անջատիչները, ռելեները, 4 հատ էլ. ցուցիչը: | Թող. տարեթիվ՝1982թ., հենասարքը՝ 328687 | 650 000 | 487 500 | 24 375 | 12 638 | 18 000 |
| 34 | 34 | Տ/մ.՝ Զիլ-131 | ք. Եղվարդ | Վազքը՝ 23 635 կմ, շարժիչը՝ չփորձարկված, բլոկը երկկողմանի կարկատած, կախովի սարքերը ոչ պիտանի: Թափքը՝ ենթարկված կոռոզիայի, ծռված, փտած, շիթը ծռված, թափքը ամրաններից թուլացած: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման տուփի 1-ին, 2-րդ, 3-րդ և հետընթացի փոխացումները դուրս է գցում, առկա է յուղի արտահոսք, բաժանարար տուփի միացման ժամանակ լսվում են կոշտ ձայներ, առկա է յուղի արտահոսք, ղեկային մեխանիզմը ոչ պիտանի, առջևի կամրջակի ռեդուկտորի ատամնանիվները մաշված, աջ և ձախ թեքման բռունցքները մաշված, կարդանային լիսեռները գերմաշված, կամրջակներից առկա է յուղի արտահոսք, ապակեբարձրացման մեխանիզմը ոչ պիտանի, սլաքաչափը քանդված, դռների բացման մեխանիզմը ոչ պիտանի: Բացակայում է ՈՒԿՄ-ը, ինքնափչման փականները և պաշտպանիչ թիթեղները, ռետինե խողովակները, 4 հատ էլ. անջատիչ, էլ. ռելե, տենտը, 2 հատ վառելիքի բաքը: | Թող. տարեթիվ՝ 1983թ., շարժիչի համարը՝ 060244, հենասարքը՝ 377101, թափքը՝ կողավոր | 550 000 | 412 500 | 20 625 | 10 763 | 18 000 |
| 35 | 35 | Տ/մ.՝ Ուազ 31512 | ք. Եղվարդ | Վազքը՝ 367 740 կմ, շարժիչը՝ ունի յուղի արտահոսք, հանգույցները և դետալները մաշված: Թափքը՝ անբավարար, պաստառը և նստարանները ոչ պիտանի: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցումների տուփը անսարք, գտնվում է թափքում, ղեկային մեխանիզմը ունի չափից ավել ազատ ընթացք, բաժանարար տուփը գտնվում է թափքում, առջևի կարդանը ոչ պիտանի, հետին կամրջակն ունի յուղի արտահոսք, լուսարձակները ոչ պիտանի: Բացակայում է ՈՒԿՄ-ը, ժայլուզը, յուղի ռադիատորը: | Թող. տարեթիվ՝ 2001թ., շարժիչի համարը՝ 10204170, թափքի համարը՝ 10005448, հենասարքը՝ 10005601, թափքը՝ մարդատար | 550 000 | 412 500 | 20 625 | 10 763 | 18 000 |
| 36 | 36 | Տ/մ.՝ Զիլ-131-ԱՑ-4.4 | ք. Եղվարդ | Վազքը՝ 47 748 կմ, շարժիչը՝ չփորձարկված, առկա է յուղի արտահոսք: Թափքը՝ դեֆորմացված, տեղ-տեղ առկա է փտած տեղեր, պաստառը և նստարանները մաշված: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցումների տուփը, բաժանարար տուփը և ղեկային մեխանիզմը չփորձարկված, առկա է յուղի արտահոսք, կամրջակները չփորձարկված, առկա է յուղի արտահոսք, կարդանային լիսեռները գերմաշված: Բացակայում է ՈՒԿՄ-ը, լուսարձակները, չռտկերը, իքնափչման փականները, պաշտպանիչ թիթեղները: | Թող. տարեթիվ՝ 1991թ., շարժիչի համարը՝ 856593, թափքի համարը՝ 517, հենասարքը՝ 695862 | 550 000 | 412 500 | 20 625 | 10 763 | 18 000 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 37 | 37 | Տ/մ.՝ ՈւրԱլ-375 Ե<br>ԱՑ-5.5 | ք. Եղվարդ | Շարժիչը՝ չփորձարկված, առկա է յուղի արտահոսք: Թափքը՝ ենթարկված կոռոզիայի, շիթը ծակած: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման տուփի դետալները մաշված, առկա է յուղի արտահոսք, բաժանարար տուփի դետալները մաշված, կարդանային լիսեռները գերմաշված, ռեսորները ամրաններից թուլացած, էլ. սարքավորումները ապակոմպլեկտավորված: Բացակայում է ՈՒԿՄ-ը, կլեմաները, մասսայի կնոպկան, դիմացի ապակին, հետևի ապակին, յուղի շուպը, ռելե կարգավորիչը, վառելիքի ցուցիչը, արգելակման բաչոկը: | Թող. տարեթիվ՝ 1982թ., շարժիչի համարը՝ 726960, թափքի համարը՝ 820901, հենասարքը՝ 384382 | 600 000 | 450 000 | 22 500 | 11 700 | 18 000 |
| 38 | 38 | Տ/մ.՝ Գազ-66 | ք. Եղվարդ | Վազքը՝ 30 328 կմ, շարժիչը՝ առկա է յուղի արտահոսք, կախովի սարքերը անսարք: Թափքը՝ ամբողջովին ծռված, փտած, շիթը դեֆորմացված, թափքը ծռված, փտած, կողային ապակիները քանդված: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցումների տուփը, բաժանարար տուփը ունի յուղի արտահոսք, ղեկաին մեխանիզմն ունի նորոգման կարիք, կամրջակներն ունեն յուղի արտահոսք, կարդանային լիսեռները գերմաշված, լուսարձակները ոչ պիտանի, օդի և արգելակման համակարգը անսարք, վառելիքատար խողովակները մասնակի մասնատված, խցիկի պաստառը և նստարանները ոչ պիտանի, ցուցիչները քանդված: Բացակայում է ՈՒԿՄ-ը, ինքնափչման փականները և պաշտպանիչ թիթեղները, փեչի համակարգը, դռների բռնակները, տենտը, աղեղները, օդի գլխավոր փականը, դիմապակին, փոքր հայելիները, որոնող լապտերը: | Թող. տարեթիվ՝ 1987թ., շարժիչի համարը՝ 206247, թափքի համարը՝ 3077, հենասարքը՝ 0514111 | 600 000 | 450 000 | 22 500 | 11 700 | 18 000 |
| 39 | 39 | Տ/մ.՝Ուազ-31512 | ք. Եղվարդ | Վազքը՝ 242 806 կմ, շարժիչը՝ ոչ պիտանի, կախովի սարքերը ոչ պիտանի: Թափքը՝ ունի փտած տեղեր, շիթը դեֆորմացված, կողային հայելիները ոչ պիտանի, նստարանները պատռված, արևիկները ոչ պիտանի: Այլ հանգույցներ և դետալներ՝ ղեկային մեխաիզմը անսարք, կամրջակները չփորձարկված, կարդանային լիսեռները գերմաշված, փոխանցումների տուփը և բաժանարար տուփը չփորձարկված, առկա են յուղի արտահոսք, լուսարձակները ոչ պիտանի: Բացակայում է ՈՒԿՄ-ը, գործարկման փականը, կովրիկները, չոտկեերը, քլ. անջատիչները, լուսարձակները, շարժիչի փոկերը: | Թող. տարեթիվ՝ 2001թ., շարժիչի համարը՝ 10012300, թափքի համարը՝ 10005027, հենասարքը՝ 10005437, թափքը՝մարդատար | 550 000 | 412 500 | 20 625 | 10 763 | 18 000 |
| 40 | 40 | Տ/մ.՝ Ուազ-3962 | ք. Եղվարդ | Վազքը՝ 452 810 կմ, շարժիչը՝ առկա է յուղի արտահոսք, կախովի սարքերը ոչ պիտանի: Թափքը՝ ենթարկված կոռոզիայի, առկա են փտած տեղեր, հետևի ձախ դուռը ծռված, նստարանները պատռված: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման տուփը փոխանցումները դուրս է գցում, առկա է յուղի արտահոսք, բաժանարար տուփն ունի յուղի արտահոսք, դետալները մաշված են, ղեկային մեխանիզմում առկա է յուղի արտահոսք, կամրջակների ռեդուկտորի ատամնանիվները մաշված, առկա է յուղի արտահոսք, կարդանային լիսեռները մաշված, ռեսորները ամրաններից թուլացած, հովացման ռադիատորը եռակցված: Բացակայում է ՈՒԿՄ-ը, դիմապակին, առջևի շիթը, առջևի լուսարձակները, շարժիչի փոկը, կարբյուրատորը, բենզամղիչը, էլ. անջատիչները, հետևի ձախ դռան ապակին, դռների բռնակները, կարդան, ֆարկոպ, կողային հայելիները, ռելեները, խցիկի պլաֆոնը, վառելիքի բաքը: | Թող. տարեթիվ՝ 2000թ., շարժիչի համարը՝ 100307, թափքի համարը՝ 0036312, հենասարքը՝ 0035491 | 600 000 | 450 000 | 22 500 | 11 700 | 18 000 |
| 41 | 41 | Տ/մ.՝ Զիլ-131 | ք. Եղվարդ | Վազքը՝ 9 158 կմ, շարժիչը՝ աշխատում է անկանոն, դետալները մաշված, առկա է յուղի արտահոսք: Թափքը՝ հնամաշ, ունի փտած տեղեր, նստարանները և պաստառը ոչ պիտաի, թափքը ոչ պիտանի: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցման և բաժանարար տուփերում առկա է յուղի արտահոսք, ղեյակային մեխանիզմը պտտվում է դժվարությամբ, առկա է յուղի արտահոսք, կամրջակներն ունեն յուղի արտահոսք, բնական մաշվածություն, արգելակման համակարգը աշխատում է խափանումներով: Բացակայում է ՈՒԿՄ-ը: | Թող. տարեթիվ՝ 1983թ., շարժիչի համարը՝ 629685, հենասարքը՝ 848184, թափքը՝ կողավոր | 550 000 | 412 500 | 20 625 | 10 763 | 18 000 |
| 42 | 42 | Տ/մ.՝Զիլ 131<br>ԿՊ-Զ | ք. Եղվարդ | Շարժիչը՝ չփորձարկված, առկա է յուղի արտահոսք: Թափքը՝ ենթարկված կոռոզիայի: Այլ հանգույցներ և դետալներ՝ փոխանցումների տուփը, բաժանարար տուփը, ղեկային մեխանիզմը, կամրջակները չփորձարկված են, ունեն յուղի արտահոսք, դետալները մաշված են: Բացակայում է ՈՒԿՄ-ը: | Թող. տարեթիվ՝1988թ., շարժիչի համարը՝ 477436,հենասարքը՝ 0869996, թափքը՝ կունգ | 850 000 | 637 500 | 31 875 | 15 013 | 18 000 |

* *Աճուրդի կազմակերպչի անվանումը, գտնվելու վայրը՝ «**Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ (հասցե՝ ք.Երևան, Չաքիյան 10)**:*

* ***Աճուրդի մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), որոնք աճուրդի մասին հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող աշխատանքային օրը (ժամը՝*** *15:00-***ն***)* ***ներկայացրել է աճուրդի մասնակցության հայտ****:*

* *Յուրաքանչյուր հաջորդ լոտի աճուրդը սկսվում է նախորդ լոտի աճուրդն ավարտվելուց հետո:*

• ***• Մասնակիցները վաճառվող լոտ(եր)ին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը ընկած ժամանակահատվածում, այցելելով վերոնշյալ հասցե, իսկ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով զանգահարել 095-88-07-00 հեռախոսահամարով:***

***Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում աճուրդի ներկայացված լոտի (լոտեր) որակի համար: Աճուրդում գործում է հետևյալ սկզբունքը՝ «աճուրդի մասնակիցը «տեսել-համաձայնել է»:***

***Աճուրդի մասնակցության հայտերի ներկայացնելը և պայմանները՝***

* Աճուրդին կարող են մասնակցել այն անձինք, ովքեր վաճառվող լոտի նկատմամբ կարող են ունենալ ***սեփականության իրավունք***, ինչպես նաև սահմանված ժամկետում Կազմակերպչին են ներկայացրել ***աճուրդի մասնակցության հայտ***՝ աճուրդի մասնակցության համար ***անհրաժեշտ փաստաթղթերով***:

***Աճուրդի մասնակցության հայտին կից անհրաժեշտ փաստաթղթերն են՝***

- ***<u>նախավճարի վճարումը</u>*** հաստատող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրած լոտի համար, ***պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը***), մուտքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության ***թիվ 900018002171***, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակը՝ ***<u>աճուրդի նախավճար</u>***՝ պարտադիր նշելով օտարման մասին որոշման (հրամանի) համարը և ամսաթիվը, լոտի հերթական համարը:
- ***<u>մասնակցության վճարումը</u>*** հաստատող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրած լոտի համար, ***պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը),*** մուտքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության ***թիվ 900018002981***, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակը՝ ***<u>աճուրդի մասնակցության վճար</u>***՝ պարտադիր նշելով օտարման մասին որոշման (հրամանի) համարը և ամսաթիվը, լոտի հերթական համարը: ***Մասնակցության վճարը գույքի (լոտի) գնի մեջ չի ներառվում և անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում,***
- իրավաբանական անձանց համար՝ պետական գրանցման համարը, իսկ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ անձնագրի և սոցիալական քարտի համարը,
- հայտատուի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագիր (եթե աճուրդին ներկայանում է լիազորված անձը).

* Աճուրդի մասնակցության հայտը՝ աճուրդի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերով ներկայացնելու դեպքում Կազմակերպիչը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական (տոմս), որի տրամադրումը դադարեցվում է աճուրդը սկսելուց առնվազն երեսուն րոպե առաջ:

***Աճուրդի մասնակից չհամարվող անձինք  և այդ անձանց գործողությունների վարքագծի կանոնները՝***

- Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճարը՝ 2000 ՀՀ դրամ՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության թիվ 900018002981 հաշվեհամարին:
- Վճարումը հաստատող անդորրագիրը (նշելով վճարման նպատակը՝ դիտորդի տոմսի վճար) և անձնագիրի պարտճեն ներկայացնել Կազմակերպչին՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ՝ ընդհուպ մինչև աճուրդի սկսվելը  (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10):
- Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք աճուրդի անցկացման դահլիճում զբաղեցնում են առանձին նստատեղեր:
- ***Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանն ու ենթարկվել աճուրդի կանոնակարգով սահմանված կանոններին:***

***Աճուրդի անցկացման և աճուրդում հաղթողին որոշելու կարգը՝***

- Աճուրդի մասնակիցների ***անձնագրի և մասնակցի վկայական(ներ)ի*** առկայությունը պարտադիր է, լիազորված անձի դեպքում՝ նաև ***լիազորությունները հաստատող փաստաթղթերը***:
- Նախքան աճուրդի սկսվելը Կազմակերպիչը գրանցում է մասնակիցներին, ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթերը և յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայականի (տոմսի) համարին համապատասխան, տրամադրում է քարտեր:
- Աճուրդը բացվում է հայտարարությամբ: Հայտարարության մեջ նշվում է աճուրդում վաճառվելիք լոտի անվանումը և նկարագրությունը, դրա մեկնարկային գինը, լոտի նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև աճուրդի անցկացման ձևը, այդ թվում՝ գնային հայտեր ներկայացնելու կարգը:
- Աճուրդը անց է կացնում աճուրդավարը: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ (բարձրացնելով իր մասնակցության քարտը), որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույն հավելման (քայլի) չափով:
- Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից:
- Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդավարը վիճակահանության միջոցով որոշում է հաղթող մասնակցին:
- ***Աճուրդում գոյացած գինը նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափը չգերազանցելու դեպքում վճարվում է աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը, իսկ գերազանցելու դեպքում հաղթող մասնակիցը պարտավոր է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել մասնակցի վկայականը (տոմս) և վճարել իր առաջարկած գնի հինգ տոկոսի չափով նախավճարը (ՀՀ օրենսդրությամբ սահմանված վճարման միջոցներով), որը սահմանված ժամկետում հետագա վճարումների չկատարման դեպքում չի վերադարձվում և փոխանցվում է ՀՀ պետական բյուջե: Գնորդը վճարումները կարող է կատարել նաև լիազորված անձի միջոցով:***
- Վճարման դեպքում՝ աճուրդի հաղթողի առաջարկած գնի հինգ տոկոսի չափով նախավճարի գումարը հաշվարկվում է հաղթողի (գնորդի) կողմից վճարման ենթակա գումարի մեջ և աճուրդի Կազմակերպչի կողմից փոխանցվում համապատասխան հաշվին:
- ***Եթե աճուրդը համարվում է չկայացած հաղթող մասնակցի կողմից վճարումները սահմանված ժամկետում չկատարվելու կամ աճուրդային արձանագրությունը չստորագրվելու պատճառով***, ապա այդ դեպքերում հաջորդ աճուրդը կազմակերպվում է նույն պայմաններով՝ առանց մեկնարկային գնի նվազման: ***<u>Տվյալ մասնակիցը հայտարարված գույքի նոր աճուրդին չի կարող մասնակցել</u>***:

* ***Աճուրդի Կազմակերպիչը նախավճարը, աճուրդը կայանալուց կամ չկայացած հայտարարվելու պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում, վերադարձնում է աճուրդում չհաղթած մասնակիցներին՝ մասնակցության հայտում նշված հաշվեփիրոջ հաշվեհամարին:***

* ***Համաձայն Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2023թ. սեպտեմբերի 19-ի թիվ 430-Ա հրամանի՝***

- Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:
- Առաջին աճուրդի ժամանակ չվաճառված գույքի վաճառքի նպատակով կազմակերպվում է նոր աճուրդ՝ գույքի վաճառքի մեկնարկային գինը նվազեցնելով վերջին աճուրդի մեկնարկային գնի 15 տոկոսի չափով:
- Աճուրդում հաղթող ճանաչված անձն արձանագրությունն ստորագրելու օրվանից 10 օրվա ընթացքում պարտավոր է վճարել լոտի (լոտերի) գինը:
- Գնորդը պարտավորվում է գույքի արժեքի որոշման համար նախատեսված գումարը վճարել գույքի գնի վճարման համար սահմանված ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետական թիվ 1 բաժանմունք՝ 900018002981 հաշվեհամարին:
- Գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել տրանսպորտային միջոցի պետական հաշվառման հետ կապված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գումարներն ու տուրքերը:
- Աճուրդի հաղթողի կողմից սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում մուծված նախավճարը չի վերադարձվում, աճուրդը համարվում է չկայացած և լոտ (եր)-ը վաճառելու նպատակով կազմակերպվում է նոր աճուրդ՝ նույն պայմաններով:

* ***Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և աճուրդի անցկացման կանոնակարգին ծանոթանալու համար կարող եք դիմել «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10 կամ զանգահարել՝ 010***-52-63- 32 , 043-06-07-16 ***հեռախոսահամարներով:***

***Ծանուցում.***
***«Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 9-րդ հոդված.***
*1. Այն պայմանները և տեղեկությունները, որոնք նշվել են աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ, ենթակա չեն փոփոխման, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխություններ են տեղի ունեցել աճուրդով վաճառվելիք լոտի նկատմամբ սահմանափակումների մասով կամ փոփոխություններ են տեղի ունեցել՝ կապված լոտի ֆիզիկական վիճակի հետ, կամ աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նախատեսվել է փոփոխությունների հնարավորությունը: Սույն մասով նախատեսված դեպքում աճուրդի կազմակերպիչը պարտավոր է մինչև նախորդող երեք օրը կատարել աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխություններ և լրացումներ (այսուհետ՝ հրապարակային ծանուցման*

*փոփոխություն) այն ձևով, ինչպես կատարվել էր աճուրդի մասին հրապարակային ծանուցումը:*
*2. Եթե հրապարակային ծանուցման փոփոխությունը չի կատարվել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում և կարգով, ապա աճուրդի կազմակերպիչը կրում է մասնակիցների կրած իրական վնասների ռիսկը:*
*3. Աճուրդի մասին հրապարակային ծանուցում կատարելուց հետո թույլատրվում է հրապարակային ծանուցման փոփոխությամբ կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:*

***Քրեական օրենսգրքի 283 հոդված.***

*1. Հրապարակային սակարկությունների կամ գնումների անցկացման կարգը խախտելով կամ մեկ այլ անձի հետ անօրինական համաձայնության գալով հրապարակային սակարկության կամ գնումների հաղթող դառնալով, խաբեությամբ կամ ապօրինի այլ եղանակով գույքի սեփականատիրոջը, սակարկություններ, գնումներ կազմակերպողին, գնորդին, այլ տնտեսավարող սուբյեկտի, անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին խոշոր չափերի գույքային վնաս պատճառելը՝*
*պատժվում է տուգանքով՝ պասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:*
*2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝*
*1) կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ*
*2) առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել՝պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:*

**Ուշադրություն. աճուրդի ընթացքը տեսաձայնագրվում է՝ դրա օրինականությունը ապահովելու նպատակով:**